ՄԱՀԱԳՈՅԺ

Ամսիս 3-ին վախճանուեց Սինօդի անդամ արժանապատիւ Ներսէս Վարդապետ Հայկազունին, որը իւր ուսումն առել է Հանգուցեալ Գրիգորիս եպիսկոպոս Խահակեանցի մօտ։ Հանգուցեալը ձեռնադրուել էր քահանայ Փարպի գիւղում, որտեղ և քահանայագործել է երկար ժամանակ, որը իւր կողակցի մահուանից յետոյ՝ 1886 թուին 19 Նոյեմբերի մուտ Ս. Էջմիածնի միաբանութեան մէջ, և 29 Նոյեմբերի նոյն ամի վեղար ընդունեց Հանգուցեալ Մակար Կաթուղիկոսի հրամանով։ Հետևեալ տարին Յունիսի 30-ին Հանգուցեալը անդամ նշանակուեց Վանական Կառավարութեան և վարեց իւր պաշտօնը պատրաստակամ ծառայութեամբ։ Մակար Կաթուղիկոսի մահուանից յետոյ 1892 թուի 2 Ապրիլի Ս. Սինօդի անդամ հաստատուեց, և այդ պաշտօնում մնաց մինչև օրս, միշտ հնազանդութեամբ կատարելով այն ամեն յանձնարարութիւններն, որոնք կատարելու համար պատուէր էր ստանում իւր հոգևոր իշխանութիւնից։

Մահուանն նախորդ օրը Հանգուցեալը գնաց Երևան, որտեղ և գիշերը ժամի 2-ին անապատելի կերպով յանկարծամահ եղաւ։ Հետևեալ օրը մարմինը բերուեց Ս. Էջմիածին և միաբանութեան գերեզմանատանը հողին յանձնուեց։ Հանգուցեալը յայտնի էր միաբանութեան մէջ իւր մեղմ բնաւորութեամբ և միշտ սէր էր վայելում։ Խարեմաղթում մենք Ամենաբարձրելուց Հանգուցեալի հոգուն հանգիստ և երկնից արքայութիւն։